ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ագարակցիներ,

Մեծ հպարտությամբ և խորին երախտագիտությամբ շնորհավորում եմ բոլորիս մեր հպարտ քաղաքի՝ Ագարակի օրվա առթիվ:

Այս օրը պարզապես տոն չէ, այլև հիշեցնում, որ մեր ուժը միասնության մեջ է, և միայն միասնական ջանքերի շնորհիվ մենք կարող ենք արժանավայել շարունակել մեր քաղաքի փառավոր պատմությունն ու կերտել լուսավոր ապագան:

Այս փոքր, բայց հզոր քաղաքի զարգացման և առաջընթացի ճանապարհին եղել են բազմաթիվ դժվարություններ, սակայն մեր ժողովրդի անսահման նվիրվածության և հայրենասիրության շնորհիվ Ագարակը շարունակում է մնալ կանգուն և հպարտ:

Ագարակը իր բացառիկ պատմությունը սկսել է դեռևս 1949 թվականից, երբ պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների շահագործումն իրականացնելու ակնկալիքով հիմնադրվեց քաղաքը: 1954 թվականի մայիսի 18-ին այն դասվեց ՀԽՍՀ քաղաքատիպ ավանների շարքին, իսկ արդեն մոտ 36 տարի անց՝ 1990 թվականին, ստացավ քաղաքի կարգավիճակ:

Սիրելի՛ համայնքակիցներ, ագարակցիներ, ցանկանում եմ, որ մենք բոլորս միշտ ամուր կանգնենք մեր հողի վրա: Ագարակի հողը ծնել է աշխատասեր ու քաջարի մարդկանց, ովքեր իրենց գործով, քրտնաջանությամբ ու հանուն հայրենիքի նվիրումով ստեղծել են մեր քաղաքի ամուր հիմքերը:

Ագարակի տեսանելի առաջընթացը հնարավոր է միայն մեր հզոր համայնքի աշխատանքի ու համախմբվածության միջոցով: Այսօր մենք պետք է հպարտ լինենք մեր քաղաքի պատմությամբ, բայց նաև պետք է գիտակցենք, որ այդ պատմությունը շարունակվում է մեր՝ բոլորիս ակտիվ մասնակցությամբ:

Ագարակի ապագան մեր ձեռքերում է:

Թող Ագարակը շարունակի դառնալ հզորի խորհրդանիշ: Այն կշարունակի ծաղկել այնքան ժամանակ, քանի դեռ մենք կշարունակենք հավատալ և գործել նրա անունից:

Շնորհավոր տոնդ, մեր հպարտ քաղաք: